

ԲՆԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ  
ԱՐՈՎՅԱՆԻ ԵՎ ՐԱՋՖՈՒ ԵՐԿԵՐԻ ՍՅՈՒԺԵՆՆԵՐՈՒՄ

Վ. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ռոմանտիկ հեղինակներն առաջինն էին, որ սկսեցին մեծ աշարհություն դարձնել բնության պատկերմանը: Եթե կլասիցիստների երկերում բնությունը զուտ տեսարան էր, ապա ռոմանտիկներն այն դարձրին գործողության մաս: Ռոմանտիզմի տիպարանական զարգացումներին համընթաց փոփոխվում է նաև բնապատկերների ու գործողությունների միջև եղած կապը: Օրինակ, Արովյանը՝ առաջին հայ ռոմանտիկը, բնապատկերների ու գործողությունների մեջ փոխկապակցություն չի ստեղծում: Բնապատկերները կարծես անկախ են, չեն տարրալուծվում գործողությունների մեջ: Իսկ արդեն Րաֆֆու ստեղծագործություններում ուշինչ, անգամ բնապատկերները, պատահական չեն տրվում: Դրանք նախապատրաստում են այս կամ այն կերպարի կամ որևէ իրադարձության գործողության մեջ մտնելը:

Ինչպես հատուկ է ռոմանտիզմին, բնությունը, կյանքը ազատ չեն նրանց ստեղծագործություններում. ամենուրեք ներկա է հեղինակի սուբյեկտիվ վերաբերմունքը, նա դրդում է բնությանը գործել իր ցանկությամբ, կյանքի առանձին իրադարձություններին, ղեկաբերին ստիպում դրսևորվելու իր ցանկացած տրամաբանությամբ: Սա էլ հենց ռոմանտիկական ուղղության գեղագիտական կարևոր առանձնահատկություններից մեկն է:

Շատ հաճախ է բնությունը ռոմանտիզմի մեջ ներկայանում որպես տարերք, ազատ, գեղեցիկ աշխարհ՝ բարձր մարդկայինից: Բնության որոշ երևույթներ՝ կայծակը, փոթորիկը, սարսափ են ներշնչում:

Եթե պատկերվում է անտառ, ապա այն խորհրդավոր է, ֆանտաստիկ, այտուղ իշխող է երաժշտությունը, որը ևս ռոմանտիկական արվեստի տիպարանության մեջ մեծ տեղ է զբաղում: Հաճախ են ռոմանտիկները պատկերում ծովը, նրա անծայրածիրությունը, հզորությունը: Սակայն հայ ռոմանտիկները ավելի հաճախ զովերգում են լեռները (Աղասին բարձրանում է լեռները, «Կայծակի» հերոսներն իրենց կյանքի մեծ մասն անցկացնում են լեռներում):

Լեռների նկարագրությունը ռոմանտիկների համար ունի պատկերային արժեք: Հենց նրանց տարածական բարձրությունն է հուշում վեհ հոգու մասին: Սարերում չկա տկար ու խեղճ «աշխարհ»: Այտուղ մարդը առանձնանում է ինքն իր հետ:

Մարդը սովոր է բնությանն օժտել մարդկային հատկություններով: Նա ընդունակ է այնտեղ գտնել իր զգացմունքների արձագանքը: Ռոմանտիկների երկերում բնությունը երբեք մեռած նյութական զանգված չէ: Ըստ նրանց, բնությունը խոսակից է հասարակության կողմից մերժված բոլոր այն անհատների համար, որոնք շրջապատում չգտնելով իրենց խոհերի ու մտորումների ունկնդրին՝ դիմում են բնությանը: Բնությունը այն վայրն է, որտեղ ռոմանտիկ հեղինակը կարող է առանձնացնել իր հերոսին առօրյա անզույն, անհրապույր կյանքից, որը լեցուն է մարդկային շարագործություններով: Հենց այդ պատճառով բնությունը իմաստ է ստանում: «Այնքան հաճախ է բնությունը անկամորեն դառնում միջոտոր մեր և մեր զգացմունքների միջև,— ասում է Մատյուրենը,— օվկիանոսի շուրջը զ՛ուրկ է արդյոք իմաստից: Անպարտպը շունկ՝ արդյոք ձայն: Ավա՛ղ, այնքան խարուսիկ ու աղքատ է մեզ թվում մարդկային լեզուն այն րանից հետո, երբ սերն ու տխրությունը ծանոթացնում են մեզ բնության լեզվին: Հնարավոր է միակը, որ ընդունակ է հասկանալ մեր այն զգացմունքները, որոնք մարդը ընդունակ չէ արտահայտելու: Ի՞նչ տարբերություն մեր անիմաստ բառերի միջև և իմաստի միջև առանց բառերի, որոնք են բնության բարձրագույն երևույթները՝ ժայռեր և օվկիանոսը, լուսնի լույսը և արևի ճառագայթները, որոնց մենք ոչ միայն տեսնում ենք, այլ զգում և լսում: Բնությունն իր լուծյամբ օժտված է ամենաճիշտ բովանդակությամբ»:

Ռոմանտիկները համարյա միշտ պատկերում են վայրի բնությունը, որին չի դիպել մարդկային ձեռքը, և որտեղով չի անցել մարդը:

<sup>1</sup> «Немецкая романтическая повесть», т. 1, 1935, с. 308—309.

Նրանք բնությունը հակադրում են քաղաքի աշխույժ կյանքին, և այն ներկայացնում իդեալական գույներով: Այն տալիս է ոգեշնչում, մոռացում, հանդիսաւ: Ի հակադրութիւն հասարակութեան, այնտեղ ամեն ինչ պայլ է, համեստ, ի սրտե և հարմոնիկ: Ը՛վ ռոմանտիկ հերոսները իրենց ապաստանը հաճախ բնութեան մէջ են գտնում:

Ռոմանտիկները մոտ բնութեան երևույթները համապատասխանում են մարդկային զգացմունքներին ու ապրումներին: Գերմանացի ռոմանտիկներից է Տիկն իր պատմվածքում գրում է. «Այն ամենը, ինչ իրական գեղեցիկ է, բարձր ու մեծ, որով մենք հիանում ենք ու հրապուրվում, մեզ զարմացնում է ոչ թե ինչ-որ օտար, շսված և շտեմնված մի բանով, այլ նման պահերին մեզ համար պարզաբանվում է մեր «ես»-ը, մեր մէջ արթնանում են մեր հիշողութիւնները և ամենաթանկ ու սիրելի զգացումները»<sup>2</sup>: Բնութեան երևույթները մարդը հարմարեցնում է իր տրամադրութիւններին, տպավորութիւններին: Նա ընկնում է այնպիսի վիճակի մեջ, որ սկսում է հասկանալ բնութեան «չեղուն», խոսել նրա հետ: Հերոսը և բնութիւնը ռոմանտիկական ստեղծագործութեան մեջ հաճախ նույնանում են:

Դիտարկենք բնապատկերներն Արովյանի երկերում:

Նշենք, որ Արովյանի երկերում բնապատկերներն այդքան էլ շատ չեն: Ընթացման մի երկու նախադասութեամբ ներկայացնելով բնապատկերը՝ Արովյանն անցնում է բուն գործողութիւններին նկարագրութեանը: Բարեկենդանի նկարագրութեան մեջ կարողում ենք «Արեգակն եկել, երկնքի մէջտեղը բռնել էր, օրվան փուշը մի քիչ կոտրվել, տարացել էր: Սար ու ձոր արծաթի պես փլփլում, պլպլում էին»<sup>3</sup>: Հեղինակը նկարագրում է բնութիւնն այնպես, ինչպես ինքն է տեսնում, ընկալում: Բնութեան տեսարանները չեն լուծվում գործողութեան հետ:

Այնուամենայնիվ ն. Արովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում պակաս կարեւորութեամբ չի վերաբերվում բնանկարներին: Խղարարքիխայի ճակատամարտի պատկերը Արովյանը սկսել է անմիջապէս բնանկարով: Թվում է՝ մի կախարդական ձեռք խոսնել է բնութիւնը: Ծարժվող, ահագնացող անհանգիստ տարերքը հանճարեղ վրձնով կենդանագրվել է պաստառի վրա: Ամեն քառ մի ներկ է, ամեն խոսք՝ բրանգների վառ համադրութիւն, որոնք ոչ միայն առարկայական են դարձնում պատկերը, այլև շունչ ու հոգի տալիս նրան:

Հասան-խանը, սարսափով փախելով Անիից, իր դժոխային շարութեամբ ընկավ անպաշտպան Խղարարքիխայի վրա: Ահա այդ շարութեան ու ոճի շափի համեմատ էլ Արովյանը տրվել է բնանկարը՝ արտացոլելու և ընդգծելու այն միտքը, որ մարդկային ոճից ամենահաճվորն է բոլոր շարութիւններից: Դրանից սարսափում է նույնիսկ բնութիւնը՝ «բոլոր տիեզերք, հորիզոնք երկնից, գագաթք լեռանց, սահանք բարձանց սկսեցին տապալիլ,— պատկերում է Արովյանը,— Թխպազին արջնաթույր, սևաթև ամպն, որ բարձրացել էր, հառավ արեգակի մոտ, ու արյան ծովի պես՝ առաջ փոքր ժամանակ կարմրատակեցավ, ապա կուտակվելով, ծալվելով էնպես ալլազունեցավ, սևացավ, մինչև հոռի տեղից տեսողը էլ՝ էն օրը էնպես էին կարծել՝ որ մեկ տեղ աշխարհ ա կործանվում. օրը դառավ գիշեր»<sup>4</sup>:

Նկատենք, որ Արովյանի մոտ բնութիւնը գործողութիւններից անշատ է: Հեղինակը սիրում է օգտագործել բնապատկերներ, սակայն նա դիմում է դրան ավելի շատ ընդգծելու համար հայրենի եզրերի գեղեցկութիւնները, ոչ թե կապ ստեղծելու կամ նախապատրաստելու հետագա իրադարձութիւնները:

Ծրկրորդ գլխում ընդամենը մեկ նախադասութեամբ պատկերելով Զանգվի քարոտ, զարհուրելի ափերը՝ անմիջապէս անցնում է «անմազ, անլեզու, մարդակեր բերդի» նկարագրութեանը: Զանգուի նկարագրութիւնը տրվում է ոչ նրա համար, որ ինչ-որ ձեռք նախապատրաստվի հետագա գործողութիւնը, այլ պարզապէս բերդը գտնվում է գետի ափին: Արովյանը սիրում է այս կամ այն առիթով անդրադառնալ արեգակի նկարագրութիւններին: Կարողում ենք «Արեգակը կրակ դառած՝ Ալադյազի կողմից բարձրացավ, աչքերը սրել, երկրի մեջն էր ուզում մտնի, քարերը ձօռթի, որ պարզ տեսնի մեր ազգի քաջահղութիւնն ու տղամարդութիւնը»<sup>5</sup>:

Արևը Արովյանի մոտ խորհրդանշել է: Այն վերևից դիտում ու գնահատում է մարդկանց ու նրանց արարքները: Եթե Խղարարքիխայի մարտի տեսարանում ամպերը ծածկում են արևը, ապա արյուն պիտի թափվի: Արեգակը վրդովված է այս տեսարանից: Նա դեռ միջօրեին չհասած՝ ուզում էր, որ «կրակ վեր ածի, սար ու ձոր խորովի»<sup>6</sup>: Արևը չի կարողանում հանդուրժել մարդկային շարագործութիւններն ու ավերածութիւնները:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 222:

<sup>3</sup> Ն. Արովյան, Վերք Հայաստանի, Ծր., 1984, էջ 47:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 132:

Ինչպես տեսնում ենք, հեղինակի նման նրա պատկերած բնությունն էլ ավելի շատ զնահատողի դերում է, քան նախապատրաստողի: Արքայանն առիթը բաց չի թողնում այս կամ այն դեպքի շուրջ իր տպավորությունն արտահայտելու: Այդ պատճառով նրա երկում ամենուր զգացվում է հեղինակի միջնորդությունն ու զնահատականը: Այդպես էլ բնապատկերներն են:

Բնությունն էլ հեղինակի նման կրթոտ է, զգացական, հախուռն: Այն դառնում է կատաղի՝ համահունչ մարդկային դաժանություններին: Արքայանը ոճրագործ, անիրավ մարդուն համարել է շարիք և՛ մարդու, և՛ բնության համար: Բնությունը հերոսացվում է և ներկայացվում արդարության արտահայտիչ, ոճրագործին պատժող, ոճիրների ու խոշտանգումների մեջ զոհվող ժողովրդի հերոսական պաշտպան, հանգամանք, որով Արքայանը ուսուցանում էր ինքնապաշտպանություն և հերոսականություն: Հիշենք այն կտորը, որը բացահայտում է փոթորիկ գաղափարական բովանդակությունը: Տեսնում ենք զգացումների մի հեղեղ, որի ամեն մի խոսքը արյունով է շաղախված: Արվեստագետի վրձնի տակ հերոսացվում է բնությունը:

Թվում է, թե հանգուցալուծումը տրված է, Աղապին մահացել է, Մուսան՝ նույնպես: Սակայն հեղինակը վեպը սահմանափակում է Զանգվի նկարագրությամբ, որը համահունչ է դեպքերի ողբերգական վախճանին: Զանգուն, ինչպես մի կատաղած վիշապ՝ «երկնքիցը թռած, գլխիվեր ճուղակ, մեկ տուտը Սեանի հանդարտ ծովումը, մեկ տուտը Արագի բրբրված զրաղումը, սար ու ձոր կիշոր տալով, քանդելով, տապալելով, քափ ու քրտինքը բերանը կոխած, զզված մազերը քլալին գցած, կապը կտրած»<sup>7</sup>, ողբում է հերոսների վախճանը:

Նկատենք, որ բնությունը դարձյալ իր զգացական վերաբերմունքով է զնահատում դեպքերը: Բնությունը ևս ցնցված է հերոսների վախճանից, և նա հեղինակի հետ ողբում է հայրենասերների մահը: «Վերք Հայաստանիում» այնքան հաճախ է հեղինակի միջամտությունը, որ նա դառնում է իր վեպի հերոսներից մեկը: Եվ վերջին գլխում հենց այդ հեղինակ-հերոսն է դիմում Զանգվին վերջինիս դարձնելով իր զգացմունքների ունկնդիր:

Զանգուն հեղինակի համար խոսակից է: Նա ասում է. «Զանգի՛, Զանգի՛, գեղեցի՛կդ իմ Զանգի՛: Հեղինակը Զանգուի հետ մորմորում է, սգում: Սա զգացմունքների մի ամբողջ հորձանք է: Հեղինակի զգացականությունը է՛լ ավելի ընդգծված է հենց այս գլխում: Եվ, իրոք, ո՞վ կարող է ավելի լավ ունկնդիր դառնալ ոռմանտիկ հեղինակին, քան բնությունը:

Արքայանի բնապատկերները հախուռն են, զգացական: Բնությունը կողքից դիտողի դերում չէ: Նա ապրում ու ցավում է հերոսների հետ, ուրախանում ու ողբում: Բնությունը հեղինակի զգացական «ես»-ի արտահայտիչն է, այն ոչ ինքնուրույն, որտեղ զարգանում են գործողությունները:

Անգամ բնապատկերներում զգացվում են Արքայանի և Բաֆֆու ոռմանտիզմի տիպաբանական առանձնահատկությունները: Արքայանի ոռմանտիզմը զգացական է. նա ինքն էլ խոստովանում է, որ ցանկանում է ստեղծել մի այնպիսի երկ, որը հոգեհարազատ, սրտամոտ լինի ընթերցողին: Նրա պատկերած բնությունն էլ փոթորկոտ է, բորբոքվող: Իսկ Բաֆֆու մոտ ամենուրեք վերլուծականությունն է: Նրա ստեղծագործություններն աղափած են ավելորդ պատահականություններից: Բաֆֆու բնապատկերներն էլ, հեղինակի նման, իրենց դատողական և ոչ թե զգացական վերաբերմունքն են արտահայտում գործողությունների շուրջ:

Բաֆֆու: ստեղծագործություններում մենք տեսնում ենք բնության նկատմամբ այլ մոտեցում: Այնտեղ բնությունն ու պատմական ավանդույթները արտակարգ թարմություն են տալիս, խտացնում վիպական պաթոսի ոռմանտիկական ինտոնացիան: Արտաբերն ոչ մի հանգամանք, թերևս, այնպես չի դրազեցրել Բաֆֆու ուշադրությունը, ինչպես բնությունը: Սա առկա է ամենուրեք՝ հեղինակային գեղույնների մեջ և հերոսների խոհերում: Բաֆֆին բնությանն էր դիմում մի կողմից բացելու հայրենի եզերքի հմայքը, մյուս կողմից՝ հմայք հաղորդելու գործողություններին ու նախապատրաստելու դրանք: Բնությունն իր բոլոր դրսևորումներով՝ տարբերով, գեղեցկությամբ, բանաստեղծականությամբ, խտացնում է ընդհանուր մթնոլորտը: Ահա թե ինչու բնության ոչ մի շյուղ, ոչ մի երևույթ, տարերքի ոչ մի դրսևորում անտես չի մնում գրողի տեսողաշարից. բարձրարիժ լուներն իրենց հավերժական վեհությունն են ցուցադրում, ժայռերը՝ իրենց գաղտնի խորհրդականությունը, հովիտներն՝ իրիկնամուտի անզորք են տրամադրում, երփներանգ դաշտերը՝ ծաղիկների ու կանաչի բուրմունքը, և այսպես՝ անտառներն ու գետերը, ծովերն ու լճերը, փոթորկոտ գիշերներն ու լուսապայծառ առավոտները: Եվ ինչպե՞ս կանխորոշված են բնության շարժումները, ոչ մի քմահաճ ինքնադրսևորում, ամեն ինչ նպատակաբանված է մարդու հոգեբանական պահի անհրաժեշտությունը:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 241:

Բաֆֆու բնապատկերները համեմատաբար հանդիստ են, թեև ներքուստ լարված են և պատ-  
րաստ պայթյունի: Բաֆֆին բնությունը չի նկարագրում ինքնանպատակ, այլ նախապատրաստում  
է վեպի համապատասխան դեպքերին: Այստեղ բնությունը հարմարեցված է իրադարձություն-  
ներին: Բնության պատկերը այն միջավայրն է, որից աճում է գործողությունը:

Հենց վեպի սկզբից ներկայանում են ժամանակաշրջանի խորհրդավոր պատկերները, փո-  
թորկոտ ու աղետներով լի պատմական ժամանակաշրջանի ոգին: «Լուսնի եղջյուրը ծածկվեցավ  
Քարթե լեռան ետևում և Տարոնը ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ: Ոչ մի աստղ չէր երե-  
վում: Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի  
կրկուտ ու նեմրու՜թ լեռների կողմերը և այնտեղ կուտակվելով, թանձրանալով միգային սև կար-  
պարանք էին ստանում: Այդ կողմից երբեմն փայտակավում էր կայծակը և լսելի էր լինում  
որոտման խուլ դղրդյունը, որ գուշակում էր հորդ անձրև»<sup>6</sup>:

Բնության նկարագրություններում ամենուրեք առկա է հեղինակի միտումը, բնությունը  
երևան է գալիս իր բարձր, կատարյալ էությունը:

Բաֆֆին գրում է. «Հին Արաքսը զարմանալի որոգայթներ ունի: Նա և՛ զարմանալի քմա-  
հաճություններ ունի»<sup>7</sup>: Կյանքն էլ զարմանալի քմահաճություններ ունի, գործողությունների ըն-  
թացքն էլ: «Երբեմն լեռնային գոտիների միաբանությունը խախտվում էր, բաժանվում էին  
միմյանցից, հեռանում էին միմյանցից, և բաց էին սնում նրա առջև լայն, ընդարձակ տարա-  
ծություն: Այդ միջոցին նրա կամայականությունը շափ նրաներ»<sup>8</sup>: Միայն բնությունը գիտե-  
թե ինչ է սպասվում: Նա կանխագում էր դեպքերի նորալի վախճանը:

Սամվելը խորը հոգևկան մաքառումների մեջ էր, երբ դիմավորեց Արարատյան դաշտի  
լուսապայծառ առավոտը: Այստեղ նա պետք է հանդիպեր հորը, այստեղ պետք է լուծվեր հո-  
գեբանական բարդ հանգուցը:

Ռոմանտիզմի մեջ էական գիծ է հակադրությունը: Ռոմանտիկի համար հատկանշական է  
արտաքինի և ներքինի, հոգևվիճակի և արարքների հակադրությունը: Այստեղ դա զգացվում է  
բնապատկերի և գործողության ընթացքի հակադրումով: Արարատյան դաշտի լուսապայծառ  
առավոտին պիտի հաջորդի Սամվելի՝ հայրենասիրական զգացումով պայմանավորված սպա-  
նությունը:

Երկում բնությունը շարժվում է, պարում ու նախապատրաստում հերոսների գործողություն-  
ները: Հատվածք լի է էպիտոններով, որոնք էլ հենց շնչավորում են բնությունը: Սակայն ան-  
գամ բնության պատկերման հատվածներում առկա է ոչ թե զգացականությունը, այլ հավա-  
սարակչովածությունը, դատողականությունը, կանխամտածվածությունը:

Սքանչելի գեղարվեստական հմայքով, հոգեբանական նրբանկատությամբ է պատկերված  
Սամվելի և Աշխենի հանդիպումը Արտասուրի աղբյուրի մոտ: Կնոջ հերոսական գծերի հետ միա-  
սին Աշխենն այստեղ հանդես է գալիս նաև իր ամբողջ կանացի նրբությամբ ու նազելիու-  
թյամբ: Կրիկկական խորը զգացողությամբ են պատկերված նրա անհամբեր սպասումները, ք-  
րոնց հետ սքանչելի ներդաշնակվում է այն տխուր խորհրդածությունը, որ հանդիպումը պիտի  
լինի կարճատև, և նրանք պիտի բաժանվեն զուցե առհավետ: Եվ բնությունն էլ ներդաշնակ է  
շնչում այս ամենին. «Շրջակայքը լուռ էր: Լուռ էր անտառը, որ տարածվում էր մինչև կա-  
պարագույն ծովերը»<sup>9</sup>: Զե՛ որ սիրող զուլգն ունի ընդամենը մի քանի րոպե ժամանակ: Լույ է  
պետք, որ պեսզի լիաթարվի գոնե այդ կարճ հանդիպումը: Լույ է միայն լույ: Ու դարձյալ՝  
բաֆֆիական զոհաբերությունն է՝ անձնական զգացմունքները՝ հայրենասիրությունը: Բարձր ոգե-  
վորությունը, ռոմանտիկական մաքրությունը, մարդկային բարձրագույն զգացման գեղեցկու-  
թյունը Բաֆֆու նկարագրությունների մեջ այնպես թուփշ ու հոգեպարար տրամադրությամբ են  
ներծծված, որ դարձել է իդեալական սիրո կատարյալ օրինակ: Ո՛րն է այդ սիրո վեհությունը,  
այն, որ իսպառ ազատ է նեղ, եսական հաշիվներից: Բնությունն էլ համահունչ է այս ամենին,  
այն ևս ներծծված է այդ սիրո մաքրությամբ:

Բաֆֆու ունի մի առանձնահատկություն ևս. ճակատամարտերի նկարագրություններից առաջ  
հեղինակը տալիս է բնության արտասովոր երևույթների նկարագիրը, նախապես ընդգծում այն  
արհավիրքները, որոնք պետք է առաջանան այդ պատերազմից հետո: Ոճական այս հնարանը  
նույնպես կապվում է ստեղծագործական մեթոդի հետ: Այս միջոցով հեղինակը բնությունը  
հարմարեցնում է կատարվող կամ սպասվող գործողություններին և զրանով կանխագուշակում  
այդ գործողությունների վախճանը: Հիշատակելի է հատկապես «Սամվելը» վեպում վճռական ճա-  
կատամարտին նախորդող փոթորկի հոյակապ նկարագրությունը:

Բաֆֆու մոտ բնապատկերները անթիվ-անհամար են, որոնք հեղինակը ներկայացնում է

<sup>6</sup> Բաֆֆի, Սամվել, Եր., 1963, էջ 85:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 485:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 486:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 359:

որպես մարդկային հագեցվածակների միակ հարադատի: Բնության պատկերման ոչ մի բառ այստեղ պատահական չէ: Բնությունը զգում է այն, ինչ հերոսները, բնությունը շարժվում է այնպես, ինչպես պիտի ընթանան գործողությունները:

Բնության տեսարանների նկարագրության մեջ Բաֆֆին դրսևորում է իր ողջ կարողությունները, տաղանդի ուժը, ստեղծագործական վարպետությունը, օգտագործում է պատկերավորման և արտահայտչական յուրօրինակ միջոցներ: Այս իմաստով էլ Բաֆֆու նկարագրած բնապատկերները անջնջելի են մնում ընթերցողի երևակայության ու պատկերացումների մեջ: Անգերազանցելի ու անկրկնելի ուժով են պատկերվում դաշտավայրերը, կղզիները, գետերը, բերդերն ու ամրոցները, որոնցից յուրաքանչյուրի նկարագիրը արվեստի լավագույն կտավներից կարելի է համարել: Բաֆֆու մոտ բնանկարները ինքնանպատակ չեն, սրանք ամբողջովին բխում են վեպի ընդհանուր գաղափարից: Նրա բնապատկերները հագեցած են սիմվոլիկ իմաստավորությամբ:

Բաֆֆու ստեղծագործությունների բնապատկերները գործողությունների նախաբան կամ վերջաբան կարելի է համարել: Նրա երկերում բացակայում է հեղինակը: Ի՞նչ իմաստով, որ Բաֆֆու երկերում համարյա չենք հանդիպի հեղինակի էմոցիոնալ վերաբերմունքին իր հերոսների, դեպքերի, իրադարձությունների նկատմամբ: Հեղինակը այնքան է զարգացնում իր հերոսներին, որ վերջիններս ունակություն են ձեռք բերում ինքնուրույն խորհելու, դատելու, գործելու: Այստեղ բնապատկերները ձուլվում են գործողությունների հետ: Պատահական ոչինչ չկա, նի՞ն լուսապայծառ առավոտ է, դա հայրենի երկրի լուսապայծառ առավոտներից մեկը չէ միայն: Այդ առավոտվան պիտի հաջորդեն որոշակի իրադարձություններ:

Ինչպես մյուս ողմանտիկ հեղինակները, այնպես էլ Բաֆֆին բնության նկարագրության ժամանակ ձգտում է արտացոլել այն բացառիկն ու արտասովորը, որ գոյություն ունի բնության մեջ:

Պատահական չէ, որ թե՛ Արովյանի, թե՛ Բաֆֆու երկերում բնությունն այդքան առաջնային դերում է: XIX դ. հայկական ողմանտիկմի տիպաբանությունը շարժվում էր զգացականից դեպի ինտելեկտուալ, դատողական: Այս գիծը առկա է նաև բնապատկերներում:

Աբովյանը ոչ միայն հայ նոր գրականության հիմնադիրն է, այլև՝ հայկական ողմանտիկմի: Նրա երկերում առկա են զգացմունքների պոռթկումը, հեղինակային միջամտությունները: Արովյանին հաջորդած ողմանտիկները կապող օղակ են վերջինիս իրացրոնալ և Բաֆֆու դատողական, վերլուծական ողմանտիկմի միջև:

**В. Г. САРГСЯН**—Типологическое развитие пейзажа в сюжетах сочинений Абовяна и Раффи.— Романтическая направленность творчества каждого из двух армянских писателей-романтиков 19-го века Х. Абовяна и Раффи имеет свои отличительные особенности. Они проявляются даже в типологическом развитии пейзажа. Произведения Х. Абовяна насыщены лирическими отступлениями, эмоциями автора. Здесь даже природа, беспокойная, бурлящая, спешит выразить свои впечатления, свое отношение к происходящим событиям.

Писатели-романтики второй половины 19-го века, последователи Х. Абовяна, в дальнейшем подготовили почву для возникновения и развития романтизма Раффи, рационального, рассудительного, логического. В произведениях Раффи нет излишних случайностей. Здесь картины природы словно подготавливают события и содержат как-бы их аналитическую оценку.